«ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

Արա Ֆիդանյան
ՀՀ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու

Պատմությունը վկայում է, որ գիտական շրջանակներում միջազգային հանցագործությունների բնորոշման և սահմանման առավել հաջողված փորձերից կարելի է համարել 1996 թվականին ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնախմբի՝ «Պետությունների պատասխանատվության մասին հոդվածների նախագծի» 19-րդ հոդվածում ներկայացված ձևակերպումը, ըստ որի՝ «պետության կողմից միջազգային-իրավական նորմով նախատեսված միջազգային պարտավորության խախտման արդյունքում ծագած արարքը, որը միջազգային հանրության կենսական կարևոր շահերի համար այնքան հիմնարար է, որ դրա խախտումը ողջ միջազգային հանրության կողմից դիտվում է որպես հանցագործություն, հանդիսանում է միջազգային հանցագործություն»:

Միևնույն ժամանակ, թեև Նյուրնբերգի տրիբունալի 1945 թվականի օգոստոսի 8-ի կանոնադրության մեջ բացակայում են միջազգային հանցագործությունների ուղղակի բնորոշումները, սակայն դրանում ամրագրված են միջազգային հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հիմքերը: Մասնավորապես, վերջինիս 6-րդ հոդվածի համաձայն՝ խաղաղության և մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները բաժանվում են հետևյալ երեք խնբի՝

1) խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ,
2) պատերազմական հանցագործություններ,
3) մարդկության դեմ ուղղված հանցագործություններ:

Քննարկվող հիմնախնդրին առնչվող կարգավորումներ է պարունակում նաև Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունը (Ստատուտը)[1], որի 5-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանի իրավազորությունը սահմանափակվում է միջազգային ողջ հանրությանը մտահոգող առավել ծանր հետևյալ հանցագործություններով՝

- ցեղասպանությունը,
- մարդկության դեմ ուղղված հանցագործությունները,
- պատերազմական հանցագործությունները,
- ագրեսիան:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ երկու փաստաթղթերով նախատեսված միջազգային հանցագործությունների ցանկերը էականորեն չեն տարբերվում: Պարզապես Հռոմի ստատուտում հատուկ առանձնացված է մարդկության դեմ ուղղված առանձին հանցատեսակ՝ ցեղասպանությունը, իսկ խաղաղության դեմ ուղղված հանցագործությունները, ի տարբերություն Նյուրնբերգի տրիբունալի կանոնադ-

[1] Հայաստանի Հանրապետությունը Հռոմի ստատուտը ստորագրել, սակայն դեռ չի վավերացրել:

ության, միավորված են «ագրեսիա» հասկացության ներքո: Մինչդեռ պատերազմական հանցագործություններն այդ երկու հիմնարար փաստաթղթերում էլ մատնանշված են, ինչը միանշանակ փաստում է, որ դրանք դասվում են միջազգային հանցագործությունների թվին:

Հարկ է նշել նաև, որ Հռոմի ստատուտում պատերազմական հանցագործությունների սահմանում տրված չէ: Մինչդեռ Նյուրնբերգի տրիբունալի կանոնադրության հոդված 6-ի կետ բ)-ի համաձայն՝ «պատերազմական հանցագործությունները պատերազմի օրենքների և սովորույթների խախտումներն են»:

Քննարկվող հանցանքների առավել մանրամասն սահմանում է նախատեսված Վերահսկիչ Դաշնային Խորհրդի 1945 թվականի օրենք 10-ի հոդված 2-ով, որի համաձայն՝ այդպիսիք են համարվում «անձանց կամ սեփականության դեմ ուղղված վայրագությունները կամ հանցագործությունները, որոնք հանդիսանում են պատերազմի կանոնների կամ օրենքների խախտումներ, այդ թվում, սակայն չսահմանափակվելով դրանցով, սպանությունը, դաժան վերաբերմունքը կամ օկուպացված տարածքի բնակչության ստրկային աշխատանքի կամ այլ նպատակներով արտաքսումը, ռազմագերիների կամ ծովում գտնվող անձանց սպանությունը կամ նրանց նկատմամբ դաժան վերաբերմունքը, գերիների սպանությունը, պետական կամ մասնավոր սեփականության յուրացումը, քաղաքաների կամ գյուղերի աննպատակ կամ պատերազմական անհրաժեշտությամբ չպայմանավորված ավերումը»[1]:

Միևնույն ժամանակ, մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ պատերազմական են համարվում պատերազմի կանոնների դեմ ուղղված հանցագործությունները: Ընդ որում, այդ կանոններն ընդունված է անվանել նաև զինված հակամարտությունների կամ մարդասիրական իրավունքի նորմեր կամ օրենքներ[2]:

Ինչ վերաբերում է պատերազմի կանոններին, ապա պետք է նշել, որ դրանք պատմականորեն ձևավորված, պատերզմ վարելու համընդհանուր օրենքներն ու ավանդույթներն են, որոնք պետք է պահպանեն հակամարտող կողմերը՝ զինված հակամարտության ազդեցությունները սահմանափակելու նպատակով: Դրանք կոչված են պաշտպանելու այն անձանց, ովքեր չեն մասնակցում կամ դադարել են մասնակցելուց պատերազմական գործողություններին, և սահմանափակելու պատերազմ վարելու միջոցներն ու մեթոդները:[3]

Այդ կանոնների ձևավորումն ու կատարելագործումը բավականին երկար պատմություն ունեն: Դրանց շարքում նախ և առաջ հարկ է նշել Լիբեռի 1863 թվականի կանոնները, որոնք կոչվում էին «Հրահանգներ կառավարությանը Միացյալ Նահանգների բանակների վերաբերյալ»: Վերջիններս նախ կիրառվել են ԱՄՆ-ում 19-րդ դարում տեղի ունեցած քաղաքացիական, այնուհետև նաև 1870-1871 թվականների ֆրանկո-պրուսական պատերազմների ժամանակ: Հետագայում նշված կանոնները հիմք են հանդիսացել ցամաքում մղվող պատերազմների մասին Հաագայի 1899 և 1907 թվականների կոնվենցիաների համար:

Ժամանակի ընթացքում պատերազմ վարելու նոր կանոններ ի հայտ եկան, որոնք իրենց ամրագրումը ստացան միջազգային մի շարք հիմնարար փաստաթղթերում: 1864 թվականից սկսած, երբ ընդունվեց ժնևի առաջին Կոնվենցիան՝ «Բանակում վիրավորների վիճակի բարելավման մասին», մինչև 2008 թվականի «Կասետային զինամթերքի օգտագործման մասին» կոնվենցիան ուժի մեջ մտնելը ընդուն-

---

[1] Տե՛ս **Վերահսկիչ Դաշնային Խորհրդի 1945 թվականի օրենք:** Բեռլին, 20.12.1945 թ.:
[2] Տե՛ս **Jordan J. Paust**. «International Criminal Law». Carolina Academic Press, 2006 թ., էջ 639:
[3] Տե՛ս նույն տեղում:

վել են պատերազմ վարելու կանոններին վերաբերող երկու տասնյակից ավելի կոնվենցիաներ և արձանագրություններ: Դրանց համեմատական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հիշյալ փաստաթղթերի ելակետային հիմքն են ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական բնույթի զինված հակամարտությունների հետևյալ սկզբունքները՝

1) զինված հակամարտության ընթացքում պատերազմող անձի նկատմամբ մարդասիրական վերաբերմունք,

2) պատերազմ վարելու միջոցների և մեթոդների ընտրության սահմանափակում,

3) զինված հակամարտության ընթացքում քաղաքացիական բնակչության և խաղաղ (քաղաքացիական) օբյեկտների պաշտպանություն:

Հարկ է նշել նաև, որ իրավական առումով արարքը որպես պատերազմական հանցագործություն ճանաչելու համար պարտադիր չէ, որ այն կատարված լինի ռազմական հակամարտության բուն տարածքում: Միջազգային քրեական դատարանների նախադեպային իրավունքն այդ կապակցությամբ սահմանում է. «Բավարար է, որ մեղսագրվող հանցագործությունները անմիջականորեն կապված լինեն հակամարտող կողմերի կողմից վերահսկվող այլ տարածքներում տեղի ունեցող ռազմական գործողությունների հետ»[1]: Այդ կապակցությամբ 1952 թվականին Էնիգստեռի գործով Թել Ավիվի տարածքային դատարանը, ղեկավարվելով «Նացիստների և նացիստների հետ համագործակցողների (պատժի) մասին» օրենքով, արտահայտել է իրավական հետևյալ դիրքորոշումը. «... պատերազմական հանցագործություններից տուժողները պետք է լինեն գրավյալ տարածքի քաղաքացի, մինչդեռ այդ հանգամանքը պարտադիր չէ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում, որոնք կարող են ուղղված լինել քաղաքացիական բնակչության դեմ: ... հնարավոր է պատերազմական հանցագործության մեջ մեղավոր լինեն նաև այն անձինք, որոնք նույնիսկ գրավված տարածքների բնակիչներ են, և (կամ) տուժողները նույն ազգության են, եթե նրանց գործողությունները վկայում են, որ նրանք գործել են որպես զավթիչներ»[2]:

Այս առումով առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև նախկին Հարավսլավիայի հարցով միջազգային տրիբունալի առավել հայտնի որոշումներից մեկը, որը վերաբերում էր պատերազմական հանցագործությունների մեջ մի խումբ բոսնիացի մուսուլմանների մեղավոր ճանաչելուն՝ «Չելեբիչի» համակենտրոնացման ճամբարում կալանավորված սերբերի սպանությունների և նրանց կտտանքների ենթարկելու համար: Մասնավորապես, չնայած այդ հանցագործությունների պահին Բոսնիա-Հերցեգովինայի այդ տարածքում մարտական գործողություններ չէին ընթանում, տրիբունալն իր դատավճռում շեշտեց, որ մեղավորները «կալանավորվել էին Բոսնիա-Հերցեգովինայի կառավարության անունից իրականացվող ռազմական գործողությունների արդյունքում և այն զինված ընդհարման ընթացքում, որի կողմ էր Բոսնիա-Հերցեգովինան»:

Միևնույն ժամանակ, պատերազմ ասելով պետք է հասկանալ պետությունների միջև ռազմական հակամարտությունը, որը սովորաբար ուղեկցվում է բռնության գործադրմամբ, երբ պատերազմող կողմը կարող է ուժ կիրառել: Պատերազմի

---

[1] **Prosecutor v. D. Tadic.** Case No: IT-94-1-A. 2 October 1995, § 70; **Prosecutor v. D. Kunarac**, Case No: IT-96-23/23/1-T. 22 February 2001, § 57:

[2] **Jean-Marie Henckaerts.** Customary International Humanitarian Law. Cambridge, 2005, էջ 3869:

բռնկումը սովորաբար ուղեկցվում է պատերազմ հայտարարելով[1]:

20-րդ դարի սկզբներին միջազգային հիմնարար այնպիսի փաստաթղթերում, ինչպիսիք են Հաագայի 1907 թվականի և Ժնևի 1925 թվականի կոնվենցիաները, օգտագործվում էր «պատերազմ» եզրույթը: Մինչդեռ նույն հարյուրամյակի երկրորդ կեսից սկսած՝ միջազգային իրավական փաստաթղթերում (օրինակ՝ Ժնևի 1949 թվականի չորս կոնվենցիաներում՝ «Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին», «Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին», «Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին» և «Նավատորմի կազմում նավաբեկված վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին») շրջանառության մեջ դրվեցին նաև «միջազգային զինված հակամարտություն» և «ոչ միջազգային զինված հակամարտություն» եզրույթները: Վերջիններիս միջև սահմանները բավականին պայմանական են և առավելապես պայմանավորված են քաղաքական ու գաղափարախոսական դրդապատճառներով: Ըստ որոշ իրավաբանների, «միջազգային զինված հակամարտություն» եզրույթը ներառում է նաև «պատերազմ» հասկացությունը, սակայն յուրաքանչյուր զինված հակամարտություն չէ, որ պատերազմ է[2]:

Այսպիսով, իրավական առումով «պատերազմ» եզրույթի հատկանիշներն են՝

- պատերազմ հայտարարելու վերաբերյալ ակտի առկայությունը, ինչպես այն նշված է Հաագայի 1907 թվականի կոնվենցիայում,
- պատերազմող երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների չեղարկումը,
- երկկողմ պայմանագրերի, հատկապես՝ քաղաքական, չեղարկումը,
- հատուկ իրավական ռեժիմի գործողությունը, որը բնութագրվում է մարդու իրավունքների որոշակի սահմանափակմամբ:

Հետևաբար, միջազգային փաստաթղթերի համաձայն, միայն պետությունները կամ պետությունների խմբերը կարող են պատերազմ վարել: Մինչդեռ ինչպես արդեն նշվել է, հատկապես վերջին շրջանում գերակայությունը տրվում է ոչ թե «պատերազմ», այլ «միջազգային զինված հակամարտություն» և «ոչ միջազգային զինված հակամարտություն» եզրույթներին: Այսինքն, զինված հակամարտության կողմեր կարող են հանդիսանալ ինչպես պետությունները (միջազգային), այնպես էլ պետությունը և հակակառավարական զինված խմբավորումը (ոչ միջազգային): Սրանով պայմանավորված՝ միջազգային հիմնարար փաստաթղթերում և արդեն իսկ երկրների ազգային օրենսդրություններում «պատերազմական» հանցագործություններին փոխարինման է գալիս «միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումներ» եզրույթը: Բացի այդ, վերջինս իրավաբանական և իմաստային առումով շատ ավելի տարածական և ընդգրկուն է, քան «պատերազմական հանցագործությունները»:

Միջազգային քրեական իրավունքի տեսության մեջ առավել տարածված է այն տեսակետը, որ պատերազմական հանցագործությունները, որոնք բնութագրվում են որպես «պատերազմի օրենքների կամ կանոնների հանցավոր խախտումներ», կարող են դրսևորվել միայն պետությունների կամ պետությունների խմբերի միջև տեղի ունեցող ռազմական ընդհարումների ժամանակ[3]: Այս մոտեցման կողմնակից-

---

[1] Տե՛ս **Jordan J. Paust**. Նշվ. աշխ., էջ 643:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս **Лукашук И.И., Наумов А.В.** Международное уголовное право. М., 1999, էջ 114:

ները պնդում են, որ «պատերազմական հանցագործություններ» հասկացության մեջ տարբեր հանցավոր գործողությունների միավորման իրավաբանական հիմքն այն է, որ այդկերպ խախտվում են միջազգային իրավունքով սահմանված պատերազմ վարելու օրենքներն ու կանոնները, որոնք էլ հանդիսանում են այդ հանցագործությունների անմիջական օբյեկտը: Մինչդեռ այդ հանցագործությունների ընթացքում մարդկանց կյանքը, առողջությունը, պատիվն ու արժանապատվությունը և անձի այլ իրավունքներն ու ազատությունները պատերազմական հանցագործությունների լրացուցիչ անմիջական օբյեկտ են[1]:

Նման մոտեցում առկա է նաև որոշ երկրների ազգային օրենսդրություններում: Այսպես, 1985 թվականին ԱՄՆ-ի տարածքային դատարանը Լեո Հանդելի գործով որոշեց, որ «պատերազմական հանցագործությունները վերաբերում են այլ երկրի զինծառայողների կամ քաղաքացիական անձանց դեմ իրականացվող հանցավոր գործողություններին և ոչ թե համերկրացիներին: Ի տարբերություն դրա, մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները ներառում են սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, բռնագաղթը, այլ անմարդկային գործողությունները, որոնք ուղղված են ցանկացած քաղաքացիական բնակչության դեմ»[2]:

Որոշ միջազգային փաստաթղթերի նորմեր ևս խոսում են այս տեսակետի օգտին: Մասնավորապես, Ժնևի վերոհիշյալ կոնվենցիաների՝ 1977 թվականի երկրորդ լրացուցիչ արձանագրության հոդված 1-ի 2-րդ մասի համաձայն՝ «Սույն Արձանագրությունը չի կիրառվում ներքին կարգուկանոնի խախտման և ներքին լարվածության առաջացման այնպիսի դեպքերի կապակցությամբ, ինչպիսիք են անկարգությունները, բռնության առանձին ու պատահական գործողությունները, քանի որ այդպիսիք չեն հանդիսանում զինված կոնֆլիկտներ»:

Միջազգային փաստաթղթերով ամրագրված համապատասխան իրավակարգավորումների ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ պատերազմական են համարվում այն հանցագործությունները, որոնք կատարվել են ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային բնույթի ռազմական կոնֆլիկտների ընթացքում: Այսպես, Հռոմի ստատուտի հոդված 8-ի համաձայն, տվյալ ակտի նպատակների առումով պատերազմական հանցագործություններ են՝

ա) Ժնևի կոնվենցիաների կոպիտ խախտումները,

բ) միջազգային իրավունքով սահմանված միջազգային ռազմական կոնֆլիկտների ընթացքում կիրառվող օրենքների և ավանդույթների այլ լուրջ խախտումները,

գ) միջազգային բնույթի ռազմական կոնֆլիկտի դեպքում՝ Ժնևի չորս կոնվենցիաների համար ընդհանուր հոդված 3-ի լուրջ խախտումները,

դ) միջազգային իրավունքով սահմանված, ոչ միջազգային բնույթ կրող ռազմական կոնֆլիկտների ընթացքում կիրառվող օրենքների և կարգերի այլ լուրջ խախտումները:

Վերոհիշյալ դասակարգումը հիմք է տալիս եզրակացնելու, որ պատերազմական են համարվում ոչ միայն պետությունների կամ պետությունների խմբերի միջև տեղի ունեցող ռազմական ընդհարումների ժամանակ, այլև մեկ առանձին պետության սահմաններում իրականացվող ռազմական ընդհարման ժամանակ կատարվող հանցավոր արարքները: Այս մոտեցումն արդարացված կարելի է համարել նաև այն հիմնավորմամբ, որ, ինչպես արդեն նշվել է, «պատերազմ» եզրույթին, որը, միան-

---

[1] Տե՛ս **Наумов А.В.** Международное уголовное право. М., 2014, էջ 232:

[2] **US, District Court, Central District, California, Leo Handel case,** Judgement. 31 January 1985.

շանակ, պետությունների կամ պետությունների խմբերի միջև ռազմական ընդհարումն է, փոխարինելու է գալիս «զինված հակամարտություն» եզրույթը, որը ներառում է թե՛ պետությունների կամ պետությունների խմբերի միջև և թե՛ մեկ առանձին պետության ներսում տեղի ունեցող ռազմական ընդհարումները: Հետևաբար, «պատերազմ վարելու օրենքներ և կանոններ» հասկացությունը կարելի է դիտարկել որպես «զինված հակամարտություններ վարելու օրենքներ և կանոններ»:

Միևնույն ժամանակ, որոշ երկրների ազգային օրենսդրություններում հատուկ սահմանված է, որ պատերազմական հանցագործությունները վերաբերում են նաև ոչ միջազգային բնույթի զինված հակամարտություններին: Այսպես, օրինակ, Ադրբեջանի քրեական օրենսգրքի գլուխ 17-ի («Պատերազմական հանցագործություններ») ծանոթագրության մեջ նախատեսված է, որ տվյալ գլխի համաձայն՝ պատերազմական հանցագործություններ են համարվում ինչպես միջազգային, այնպես էլ ներքին ռազմական հակամարտությունների ընթացքում կատարված հանցավոր արարքները:

Ժնևի կոնվենցիաների առումով անհրաժեշտ է նշել, որ, ի տարբերություն 1977 թվականի երկրորդ լրացուցիչ արձանագրության, առաջին լրացուցիչ արձանագրության հոդված 1-ի 4-րդ մասի համաձայն՝ «Նախորդ կետում հիշատակված իրադրությունները ներառում են այն զինված կոնֆլիկտները, որոնցում ժողովուրդները պայքար են մղում ընդդեմ գաղութային տիրապետության և օտարերկրյա օկուպացման ու ընդդեմ ռասիստական ռեժիմների՝ ի իրականացումն ինքնորոշման իրենց իրավունքի, որն ամրագրված է Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող՝ միջազգային իրավունքի սկզբունքների մասին Միավորված Ազգերի Կազմակերպության Կանոնադրության և Հռչակագրի մեջ»: Մինչդեռ Ժնևի կոնվենցիաների միասնական հոդված 3-ը վերաբերում է ոչ միջազգային բնույթի ռազմական հակամարտություններին:

Առանձին քննարկման է ենթակա նաև այն հարցը, թե արդյոք պատերազմական հանցագործությունների սուբյեկտները հատուկ են: Այսինքն, արդյո՞ք պատերազմական հանցագործություններ կարող են կատարել միայն զինծառայողները, նրանց հրամանատարները և այլ պաշտոնատար անձինք: Այդ կապակցությամբ 1947 թվականի՝ ԱՄՆ-ը ընդդեմ Ֆրիդրիխ Ֆլիկի գործով Նյուրնբերգի տրիբունալը հայտարարեց, որ «արարքները համարվում են հանցավոր, երբ կատարվել են ինչպես կառավարության ներկայացուցչի, այնպես էլ մասնավոր անձանց կողմից»: Ավելին, որոշ երկրների ազգային օրենսդրություններով (օրինակ՝ Մոլդովայի քր. օր-ի հոդված 66-ով, Հորդանանի ռազմական քր. օր-ի հոդված 62-ով) նույնպես պատերազմական հանցագործությունների սուբյեկտների թվին են դասվում նաև քաղաքացիական անձինք:

Միաժամանակ պետք է փաստել, որ, ի տարբերություն այլ հանցագործությունների, պատերազմականները որոշ պարագաներում կարող են հանդիսանալ նաև միջազգային կամ միջազգային բնույթի հանցավոր ոտնձգություններ: Վերջիններիս թվին են դասվում այն հանցագործությունները, որոնք կատարվում են առանձին անձի կամ անձանց կողմից, շահադիտական կամ այլ նպատակներով, օրինակ՝ ռազմական գործողությունների ընթացքում որոշակի տարածքի բնակչության նկատմամբ իրականացվող սպանությունները, սեքսուալ բնույթի բռնի գործողությունները, հափշտակությունները և այլն:

Այդ արարքներն «անհամաչափ գործունեության դրսևորումներ» են, որոնք

դասվում են, այսպես կոչված, «անհատական հանցագործությունների» շարքին: Զինվորականների կողմից կատարվող նմանատիպ հանցանքները կարող են որակվել նաև որպես կարգապահական զանցանքներ, որոնց համար պատասխանատվությունը կարող է սահմանվել հրամանատարների կողմից:

Հարկ է նշել նաև, որ թե՛ միջազգային և թե՛ միջազգային բնույթի համարվող պատերազմական հանցագործությունների վերաբերյալ գործերով քննություն կարող են իրականացնել ինչպես երկրների ազգային, այնպես էլ միջազգային քրեական դատարանները: Հռոմի ստատուտի հոդված 17-ն այդ առումով սահմանում է «ընդունելիության հարցեր», որոնց համապատասխան՝ դատարանը չի կարող գործն ընդունել քննության, եթե այն արդեն քննվում է դրա իրավասությունն ունեցող մեկ այլ դատարանի կողմից: Այս պարագայում, սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել մի անչափ կարևոր հանգամանք: Մասնավորապես, Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության հոդված 11-ը սահմանում է *ratione temporis* սկզբունքը, համաձայն որի՝ Դատարանն իրավասություն ունի միայն այն հանցագործությունների վերաբերյալ գործերով քննություն իրականացնելու, որոնք կատարվել են Ստատուի ուժի մեջ մտնելուց հետո:

Մինչդեռ, նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային տրիբունալի կանոնադրության հոդված 9-ը սահմանում է, այսպես կոչված, զուգահեռ իրավասության ինստիտուտը, համաձայն որի՝ ազգային դատարանները իրավասու են իրականացնել միջազգային մարդասիրական իրավունքի դեմ ուղղված, պատերազմական հանցագործություններով քննություն: Այս պարագայում, սակայն, միջազգային տրիբունալի իրավասությունը գերակայում է ազգայինի նկատմամբ, և նախնական քննության ու դատաքննության ցանկացած փուլում միջազգային տրիբունալը կարող է պահանջել գործը փոխանցել իր վարույթ:

Այսպիսով, տարբեր միջազգային իրավական փաստաթղթերի և որոշ երկրների ազգային օրենսդրությունների համաձայն՝ պատերազմական հանցագործությունները Ժնևի 1949 թվականի 4 կոնվենցիաներով և դրանք լրացնող արձանագրություններով նախատեսված խախտումներն են: Այդ կոնվենցիաների հոդված 3-ով սահմանված են այդպիսիք համարվող հետևյալ արարքները՝

ա) ոտնձգությունը կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության նկատմամբ, մասնավորապես՝ ամեն տեսակի սպանությունները, խեղումները, դաժան վերաբերմունքը, տանջահարությունը և խոշտանգումները,

բ) պատանդ վերցնելը,

գ) ոտնձգությունը մարդկային արժանապատվության նկատմամբ, մասնավորապես՝ վիրավորական և նվաստացուցիչ վերաբերմունքը,

դ) դատապարտելը և պատիժ կիրառելը առանց նախնական դատական վճռի՝ կայացված պատշաճորոն կազմավորված դատարանի կողմից, քաղաքակիրթ ազգերի շրջանում անհրաժեշտ ճանաչված դատական երաշխիքների առկայությամբ:

Միջազգային իրավական այլ փաստաթղթերում պատերազմական հանցագործությունների տեսակները տարբեր են: Մասնավորապես, Նյուրնբերգի տրիբունալի կանոնադրության հոդված 6-ի համաձայն, պատերազմական հանցագործություններ են համարվում պատերազմի կանոնների և սովորույթների հետևյալ խախտումները՝

1) օկուպացված տարածքի խաղաղ բնակչության սպանությունները, խոշտանգումները, ստրկացման կամ այլ նպատակներով տեղահանումը,

2) ռազմագերիների կամ ծովում գտնվող անձանց սպանությունները և խոշ-

տանգումները,

3) պատանդների սպանությունները,

4) հանրային և մասնավոր սեփականության թալանը,

5) քաղաքների և գյուղերի աննպատակ ոչնչացումը,

6) ռազմական անհրաժեշտությամբ չպայմանավորված ավերածությունները և այլն:

Միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտում շատ ավելի մանրամասն են ներկայացված պատերազմական համարվող հանցագործությունները: Դրանք են՝

1) միջազգային բնույթի ռազմական կոնֆլիկտի ընթացքում կատարված 34 տեսակի հանցագործությունները, որոնք, իրենց հերթին, բաժանվում են երեք խմբի՝ ա) Ժնևի կոնվենցիաների կոպիտ խախտումներ, բ) միջազգային իրավունքով սահմանված միջազգային ռազմական կոնֆլիկտների ընթացքում կիրառվող օրենքների և ավանդույթների այլ լուրջ խախտումներ և գ) միջազգային բնույթի ռազմական կոնֆլիկտի դեպքում Ժնևի չորս կոնվենցիաների համար ընդհանուր հոդված 3-ի լուրջ խախտումներ,

2) ոչ միջազգային բնույթի ռազմական կոնֆլիկտի ընթացքում կատարված 16 տեսակի հանցագործությունները, որոնք ներառում են Ժնևի չորս կենվոնցիաների համար ընդհանուր վերոհիշյալ հոդված 3-ի լուրջ խախտումները և միջազգային իրավունքով սահմանված՝ ոչ միջազգային բնույթ կրող ռազմական կոնֆլիկտների ընթացքում կիրառվող օրենքների և կարգերի այլ լուրջ խախտումները:

Նախկին Հարավսլավիայի հարցով տրիբունալի կանոնադրության հոդված 3-ը նախատեսում է պատերազմական հանցագործությունների 5 տեսակ, իսկ Ռուանդայի հարցով միջազգային տրիբունալի կանոնադրությամբ պատերազմական հանցագործությունների տեսակները տրված չեն, սակայն սահմանված է, որ այդպիսիք են Ժնևի կենվոնցիաների համար ընդհանուր հոդված 3-ի խախտումները:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով միջազգային հիմնարար վերոհիշյալ փաստաթղթերի դրույթները, կարելի է առանձնացնել պատերազմական համարվող հանցագործությունների հետևյալ խմբերը՝

- խաղաղ բնակչության դեմ ուղղված հանցագործություններ,
- ռազմագերիների դեմ ուղղված հանցագործություններ,
- ռազմական գործողությունների անհրաժեշտությամբ չպայմանավորված՝ բնակավայրերի, շինությունների ավերում և ոչնչացում,
- միջազգային մարդասիրական կազմակերպությունների և դրանց ներկայացուցիչների դեմ ուղղված հանցագործություններ,
- պատմամշակության արժեքների ոչնչացում և թալանում,
- զանգվածային ոչնչացման զենքի կամ թունավոր միջոցների կիրառում,
- արգելված զինատեսակների կիրառում,
- երեխաների դեմ ուղղված հանցագործություններ և ռազմական գործողություններին նրանց ներգրավում,
- պատերազմական էկոցիդ և այլն:

Տվյալ թվարկմամբ, սակայն, քննարկվող հանցագործությունների տեսակները չեն սահմանափակվում: Ժամանակին համընթաց, պատերազմ վարելու նորանոր միջոցներ և մեթոդներ են կիրառվում, որոնք արդարացված համարել չի կարելի: Որպես օրինակ՝ կարելի է նշել գեոֆիզիկական և մետեոլոգիական պատերազմները:

Միևնույն ժամանակ, պատերազմական հանցագործությունների թվարկման առումով ազգային օրենսդրությունների մոտեցումները նույնպես տարբեր են: Այսպես, ԱՄՆ օրենքների ժողովածուի մաս 18-ի պարագրաֆ 118-ի հոդված 2441-ի համաձայն՝ պատերազմական հանցագործությունները Ժնևի 4 կոնվենցիաների և դրանց արձանագրությունների, Հաագայի 1907 թվականի կոնվենցիայի հավելվածի 23, 25, 27 և 28 հոդվածների, ընդհանուր հոդված 3-ի և Ժնևի 1996 թվականի կոնվենցիայի դրույթների խախտումներն են:

ՌԴ քրեական օրենսգրքի հոդված 356-ը («պատերազմ վարելու արգելված միջոցների և մեթոդների կիրառումը») սահմանում է պատերազմական հանցագործությունների հետևյալ տեսակները՝ դաժան վերաբերմունքը ռազմագերիների կամ քաղաքացիական բնակչության նկատմամբ, քաղաքացիական բնակչության տեղահանումը, օկուպացված տարածքի ազգային հարստության թալանումը, ՌԴ միջազգային պայմանագրերով արգելված՝ պատերազմ վարելու միջոցների և մեթոդների կիրառումը և ՌԴ միջազգային պայմանագրերով արգելված՝ զանգվածային ոչնչացման զենքի կիրառումը:

ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 390-ի («Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ») 1-ից 5-րդ մասերում թվարկված են զինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումներ համարվող հանցատեսակները: Նույն հոդվածի 6-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում զինված ընդհարումների ժամանակ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի միջազգային պայմանագրերով նախատեսված այլ խախտումների համար: Բացի նշվածից, պատերազմական հանցագործությունների համար պատասխանատվություն են սահմանում ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդվածներ 387-ը՝ «Պատերազմ վարելու արգելված միջոցներ և մեթոդներ կիրառելը», 396-ը՝ «Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց կամ հաստատության վրա հարձակվելը», 397-ը՝ «Միջազգային պայմանագրերով պահպանվող տարբերանշաններն ապօրինի օգտագործելը», որոնք նախատեսված են նաև Ժնևի համապատասխան կոնվենցիաներով:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի նախագծին, ապա դրանում պատերազմական հանցագործությունները, ըստ էության, նախատեսված են գլուխ 22-ի («Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունները») հոդված 144-ով՝ «Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը խախտելը»: Այդ առումով նախ և առաջ հարկ է ուշադրություն դարձնել այն տարածքային և ժամանակային սահմաններին, որոնց կապակցությամբ կարող է կիրառվել տվյալ հոդվածը: Մասնավորապես, խոսքն «օկուպացված տարածքի կամ պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակահատվածի» մասին է, ինչը բխում է Ժնևի համապատասխան կոնվենցիաների դրույթներից:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի տվյալ հոդվածի 1-ից 5-րդ մասերում թվարկված են այն հանցատեսակները, որոնց կատարման դեպքում վրա է հասնում պատասխանատվությունը: Դրանք նախատեսված են նաև Ժնևի նշված կոնվենցիաներով, սակայն դրանց թվարկումն ամբողջական չէ: Մասնավորապես, Ժնևի կոնվենցիաների լրացուցիչ առաջին արձանագրության հոդված 54-ի («Քաղաքացիական բնակչության գոյատևման համար անհրաժեշտ օբյեկտների պաշտպանությունը») 2-րդ մասի համաձայն՝ «Արգելվում է հարձակման ենթարկել, ոչնչացնել,

դուրս տանել կամ շարքից հանել այն արժեքները և օբյեկտները, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական բնակչության գոյատևման համար (պարենի պաշարները, պարեն արտադրող գյուղատնտեսական օբյեկտները, ցանքերը, անասունները, խմելու ջրի մատակարարման կառույցները և ջրի պահուստները, ինչպես նաև ոռոգման կառույցները)՝ հատուկ նպատակ ունենալով թույլ չտալ դրանց օգտագործումը քաղաքացիական բնակչության կամ հակառակորդ պետության կողմից, որպես գոյության պահպանման միջոց, անկախ դրդապատճառներից, լինի դա քաղաքացիական անձանց մեջ սով առաջացնելու, նրանց մեկնել հարկադրելու նպատակով կամ որևէ այլ պատճառով»: Բացի այդ, պատերազմական հանցագործություն է համարվում նաև քաղաքների և գյուղերի աննպատակ ավերածությունները, ինչը նախատեսված է Նյուրնբերգի միջազգային տրիբունալի կանոնադրության հոդված 6-ով և Հռոմի ստատուտի հոդված 8-ով (չնայած այս փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի աղբյուր չեն, սակայն դրանք միջազգայնորեն ճանաչում են ստացել): Մինչդեռ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի քննարկվող հոդվածում դրանք արտացոլված չեն:

Միաժամանակ, նախագծի վերոհիշյալ գլուխ 22-ում նախատեսված են գրեթե բոլոր միջազգային հանցագործությունները, մասնավորապես՝ «Ագրեսիվ պատերազմը» (հոդված 139), «Զանգվածային ոչնչացման զենք ստեղծելը, տրամադրելը, փոխարկելը կամ կիրառելը» (հոդված 143), «Պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ մշակութային արժեք ոչնչացնելը, հափշտակելը կամ բռնազավթելը» (հոդված 146), «Վարձկանությունը» (հոդված 148), «Ցեղասպանությունը» (հոդված 149), «Ապարտեիդը» (հոդված 150), «Էկոցիդը» (հոդված 152): Մինչդեռ, օրենսդրական ամրագրում չեն ստացել «մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները»՝ որպես առանձին հանցակազմ, ինչը դժվար է արդարացված համարել: Հավանաբար տվյալ դեպքում փորձ է արվել դրանք նույնացնել «միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը խախտելու» հետ: Իրականում, սակայն, դրանք լիովին տարբեր են, և դրանց նույնացումն ընդունելի չէ: Ինչպես արդեն նշել ենք, նախագծի հոդված 144-ը տարածվում է օկուպացված տարածքում կամ պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ կատարվող հանցագործությունների վրա: Իսկ եթե այդ հանցագործությունները կատարվել են ո՛չ օկուպացված տարածքում և ո՛չ էլ պատերազմի կամ զինված ընդհարման ժամանակ... Մարդկայնության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունների հիմնական առանձնահատկությունը այն է, որ առաջինները, ի տարբերություն երկրորդների, կատարվում են ոչ զինված ընդհարման ժամանակ:

Նախագծի հոդված 144-ի 6-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում «միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտում համարվող այլ արարք կատարելու համար»: Մինչդեռ ՀՀքրեական գործող օրենսգրքի հոդված 390-ի 6-րդ մասով, ինչպես արդեն նշվել է, սահմանված են «միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի՝ միջազգային պայմանագրերով նախատեսված այլ խախտումները»: Այս առումով, սակայն, հնարավոր է, որ որևէ հանցատեսակ նախատեսված լինի միջազգային այնպիսի փաստաթղթով, որը Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել: Հետևաբար, տվյալ դեպքում առավել նպատակահարմար է օրենսդրորեն ամրագրել նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված լինելու հանգամանքը:

Ամփոփելով պետք է փաստել, որ վաղուց անցել են «ասպետական» մարտեր վարելու ժամանակները, երբ պատերազմող կողմերը հստակ պահպանում էին պա-

տերազմ վարելու ավանդույթները, օրենքներն ու կանոնները: Ներկայումս հակամարտող կողմերը պատրաստ են ամեն ինչի (կամ գրեթե ամեն ինչի) հաղթանակած դուրս գալու համար: Աշխարհաքաղաքական հատկապես վերջին ժամանակաշրջանի զարգացումների պայմաններում դժվար է պատկերացնել մի լայնածավալ ռազմական կոնֆլիկտ, որում թույլ չեն տրվի միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներ, կամ չեն կատարվի պատերազմական հանցագործություններ:

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПОНЯТИЯ “ВОЕННЫЕ ПРЕСТУПЛЕНИЯ”

Ара Фиданян
Начальник Национального центрального бюро Интерпола в Республике Армения, кандидат юридических наук

Статья посвящена определению термина “военные преступления”, рассматриваемого как международное преступление. В статье предпринята попытка разъяснить термин “военные преступления”, круг его применения, подходы международных базовых документов и национальных законодательств разных стран по данному вопросу, а также отделить его виды.

SEVERAL PROBLEMS OF THE DEFINITION OF CONCEPT "WAR CRIMES"

Ara Fidanyan
Head of the National Central Bureau of Interpol of the Republic of Armenia, Candidate of Legal Sciences

The present article is dedicated to the characterization of war crimes considered to be international crime. In the article an attempt was made to clarify the term “war crimes”, the frames of its application, to define the approaches of basic international documents and national legislations of some countries towards this issue, as well as to differentiate its types.

Բանալի բառեր - *պատերազմական հանցագործություններ, պատերազմ վարելու կանոններ, զինված հակամարտություն, միջազգային մարդասիրական իրավունք, միջազգային հանցագործություն*
Ключевые слова: *военные преступления, правила ведения войны, военное противостояние, международное гуманитарное право, международное преступление.*
Key words: *war crimes, rules of warfare, armed conflict, International Humanitarian Law, international crime*